



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
22, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ԱՊՐԻԼԻ 2016 թվականի N 17

**ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 5 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

Հաստատել համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի թիվ 5 արտահերթ նիստի օրակարգը.

1. Նոր Երզնկա համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալությամբ տրամադրելու մասին:
2. Նոր Երզնկա համայնքի ղեկավարի 2016 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի հաղորդման մասին:
3. Համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 30-ի N47-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
4. Նոր Երզնկա համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը 2015 թվականի համայնքի քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ:

Կողմ -4

Դեմ -0

Չեռնպահ -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ

3. ՄԵՄՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

4. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲ



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՆ

ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 18

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հողի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասին, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Վարձակալության տրամադրել համայնքային սեփականությունը հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքի հողամասը՝ *համաձայն հավելվածի:*
2. Վարձակալության տրվող հողամասի մեկնարկային գինը 1հա գյուղ. նշանակության այլ հողատեսքի համար սահմանել տարեկան 10.000 (տաս հազար) դրամ:
3. Առաջարկել համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանին կազմակերպել հողամասի վարձակալության մրցույթի գործընթացը օրենքով սահմանված կարգով և ժամկետում:

Կողմ -4 Դեմ -0 Չեղնակալի -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՍ

3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

4. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



Հավելված

Երևանի համայնքի ավագանու

14.04.2016թ. N 18 որոշման

Ն. Կարամյան

Հ/հ	Հողատեսքը	Ծածկագիրը	Կարգը	Մակերեսը /հա/	Վարձակալության մեկնարկային գինը /դրամ/
1.	Գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսք	0141-0023	5	0,13063	1306



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
 14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 19

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԸՆԹԱՑՔԻ ՀԱՂՈՐԴՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածով՝ *համայնքի ավագանին որոշում է.*

1. Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված համայնքի ղեկավարի հաղորդումը 2016 թվականի բյուջեի 1-ին եռամսյակի ընթացքի մասին՝ *համաձայն հավելվածի:*

Կողմ -4 Դեմ -0 Չեղարկված -0

1. ԲԱԴԱԼՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՌԱՄ
3. ՄԵՄՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

(Handwritten signatures of the council members)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(01/01/2016թ. - 31/03/2016թ. ժամանակահատվածի համար)

1. Համայնքի անվանումը
2. Փաստային հասցե
3. Համայնքային տեղաբաշխման մարզը և համայնքի կոդը ըստ բյուջետային ծախսերի տարածրային դասակարգման՝
4. Համայնքին սպասարկող Գանձապետական ստորաբաժնի անվանումը
5. Համայնքի՝ Գանձապետական ստորաբաժնուհում հաշվառման համարը
6. Ծախսերի ֆինանսավորման աղբյուրի կոդը
7. Չափի միավորը՝ *հազար դրամ*

Նոր Երզնկա համայնք

2411 Կոտայքի մարզ, Գ.Նոր Երզնկա շփ 332

207050

ՀՀ Ֆին. նախ. ամբաստանյալի մարտնչություն

9,00116Բ-11

(Համայնքի բյուջե՝ 2)

«04» Հունիսի 2016թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻ ՎԿԱԿՈՒՄ՝

Ս. Կարսյան



**ՀՀ ֆինանսների նախարար, 207050, Նոր Երզնկա
Հաշվետվություն
Համառոտի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ
(02/01/15 - 31/03/16թ. ժամանակահատվածի համար)**

Տեսակ	Տվյալները հարկանքի գրանցումների գրանցման ամսվան համաձայն	Տվյալները հարկանքի գրանցման ամսվան համաձայն										Տվյալները հարկանքի գրանցման ամսվան համաձայն			
		1	2	3	4	5	6	7	8	9	10		11	12	13
Տեսակ	Տվյալները հարկանքի գրանցումների գրանցման ամսվան համաձայն	101	102	103	104	105	106	107	108	109	110	111	112	113	114
2000	ԵՆՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՆՆԱԿԱՆՆԵՐԸ (տես 2100 + տես 2200 + տես 2300 + տես 2400 + տես 2500 + տես 2600)	0	X	X	X	43 560 000,00	1 585 779,50	45 488 779,50	43 560 000,00	1 585 779,50	10 228 230,00	10 228 230,00	10 396 980,00	-168 750,00	
2100	ԵՆՆԱԿԱՆՆԵՐԸ ԵՆՆԱԿԱՆՆԵՐԸ (տես 2100 + տես 2200 + տես 2300 + տես 2400 + տես 2500 + տես 2600)	1	0	0	0	21 062 779,50	585 779,50	22 439 779,50	22 363 000,00	585 779,50	6 290 980,00	6 290 980,00	6 290 980,00	0,00	
2110	Օրվանոցի և օրվանոցի մարմնավորման համարները և համարները	1	1	0	0	21 516 779,50	585 779,50	21 856 779,50	21 080 000,00	585 779,50	5 401 180,00	5 401 180,00	5 401 180,00	0,00	
2111	Օրվանոցի և օրվանոցի մարմնավորում	1	1	1	1	21 516 779,50	585 779,50	21 566 779,50	21 080 000,00	585 779,50	5 401 180,00	5 401 180,00	5 401 180,00	0,00	
2130	Երկհամարյալ շինարարական աշխատանքներ	1	3	0	0	156 000,00	0,00	156 000,00	156 000,00	0,00	57 800,00	57 800,00	57 800,00	0,00	
2133	Երկհամարյալ շինարարական աշխատանքներ	1	3	3	3	156 000,00	156 000,00	156 000,00	156 000,00	0,00	57 800,00	57 800,00	57 800,00	0,00	
2150	Միջնորդի ֆունդի հանրային կառավարման և կառավարման համարները (տես 2100 + տես 2130 + տես 2133 + տես 2150)	1	6	0	0	250 000,00	0,00	1 117 000,00	1 117 000,00	0,00	832 000,00	832 000,00	832 000,00	0,00	
2151	Միջնորդի ֆունդի հանրային կառավարման և կառավարման համարները (տես 2100 + տես 2130 + տես 2133 + տես 2150)	1	6	1	1	250 000,00	0,00	1 117 000,00	1 117 000,00	0,00	832 000,00	832 000,00	832 000,00	0,00	

2811	Փողոցների և օրհավերժ	6	4	1	1 000 000,00	1 000 000,00	1 000 000,00	0,00	1 000 000,00	1 000 000,00	0,00	1 000 000,00	0,00	553 000,00	553 000,00	0,00
2800	ՀԱՅԿԻ ԱՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՎՈՒՄԻ (համր՝2810+համր՝2820+համր՝2830+համր՝2840+համր՝2850+համր՝2860)	8	0	0	8 106 000,00	8 106 000,00	8 106 000,00	1 700 000,00	8 106 000,00	8 106 000,00	1 700 000,00	1 700 000,00	1 700 000,00	1 800 000,00	1 800 000,00	0,00
2820	Դժվարություններ առաջադրումներ	8	2	0	8 106 000,00	8 106 000,00	8 106 000,00	1 700 000,00	8 106 000,00	8 106 000,00	1 700 000,00	1 700 000,00	1 800 000,00	1 900 000,00	1 900 000,00	0,00
2823	Դժվարություններ և վարձակալներ կենտրոններ	8	2	3	6 806 000,00	6 106 000,00	6 106 000,00	700 000,00	6 806 000,00	6 806 000,00	700 000,00	700 000,00	1 856 000,00	1 856 000,00	1 856 000,00	0,00
2824	Իվ ԱՄԱՆՅԱՆԻ կոնցերտային շարժումներ	8	2	4	1 300 000,00	300 000,00	300 000,00	1 000 000,00	1 300 000,00	1 300 000,00	300 000,00	300 000,00	0,00	0,00	0,00	0,00
2900	ԳԻՔԱՆՈՒԹՅԱՆ (համր՝2910+համր՝2920+համր՝2930+համր՝2940+համր՝2950+համր՝2960+համր՝2970+համր՝2980)	9	0	0	9 596 000,00	9 296 000,00	9 296 000,00	300 000,00	9 596 000,00	9 596 000,00	300 000,00	300 000,00	950 000,00	950 000,00	950 000,00	0,00
2910	Կանխարձյուններ և անարժեք քիմիկատներ կրթության	9	1	0	9 596 000,00	9 296 000,00	9 296 000,00	300 000,00	9 596 000,00	9 596 000,00	300 000,00	300 000,00	950 000,00	950 000,00	950 000,00	0,00
2911	Կանխարձյուններ կրթության	9	1	5	9 596 000,00	9 296 000,00	9 296 000,00	300 000,00	9 596 000,00	9 596 000,00	300 000,00	300 000,00	950 000,00	950 000,00	950 000,00	0,00
3000	ՄԱՌՔԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՏՐԱՆՈՒԹՅԱՆ (համր՝3010+համր՝3020+համր՝3030+համր՝3040+համր՝3050+համր՝3060+համր՝3070+համր՝3080)	10	0	0	700 000,00	700 000,00	700 000,00	0,00	700 000,00	700 000,00	0,00	0,00	700 000,00	115 000,00	115 000,00	0,00
3070	Մոլորակային հասուն արտադրանքներ հայր և մայրական սպանդանոց	10	7	0	700 000,00	700 000,00	700 000,00	0,00	700 000,00	700 000,00	0,00	0,00	700 000,00	115 000,00	115 000,00	0,00
3071	Մոլորակային հասուն արտադրանքներ հայր և մայրական սպանդանոց	10	7	1	700 000,00	700 000,00	700 000,00	0,00	700 000,00	700 000,00	0,00	0,00	700 000,00	115 000,00	115 000,00	0,00
3100	ՀՊԻՆԱԿԱՆ ՔՆՈՒՄՆԱԿՆԵՐ (համր՝3110+համր՝3120+համր՝3130+համր՝3140+համր՝3150)	11	0	0	2 200 000,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	2 200 000,00	0,00	0,00	0,00
3110	Կանաչաբույսեր և խաղողեղևիկներ կառնարանային խմոր	11	1	0	2 200 000,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	2 200 000,00	0,00	0,00	0,00
3112	Կանաչաբույսեր կառնարանային խմոր	11	1	2	2 200 000,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	2 200 000,00	2 200 000,00	0,00	0,00	2 200 000,00	0,00	0,00	0,00

1137	Համայնքի տարածքում ռեզերվ		80 000,00	80 000,00	X	50 000,00	80 000,00		X	40 000,00	40 000,00	X
1148	Համայնքի տարածքում համայնքին		48 000,00	48 000,00	X	48 000,00	48 000,00		X	24 000,00	24 000,00	X
1200	ՊԼԵՏՏՐՆԱԳԱՆ	7300	31 215 100,00	31 215 100,00	0,00	31 215 100,00	31 215 100,00		0,00	7 803 800,00	7 803 800,00	0,00
1250	2.5 Շրջափակ ներքին	7331	31 215 100,00	31 215 100,00	X	31 215 100,00	31 215 100,00		X	7 803 800,00	7 803 800,00	X
1251	ա) Պետական բյուջեից ֆինանսավորում		31 215 100,00	31 215 100,00	X	31 215 100,00	31 215 100,00		X	7 803 800,00	7 803 800,00	X
1300	3. ԱԶՆ	7400	4 546 900,00	4 546 900,00	0,00	4 546 900,00	4 546 900,00		0,00	579 105,00	579 105,00	0,00
1330	3.3 Պոլիսի վարչական թունից	7415	1 720 000,00	1 720 000,00	X	1 720 000,00	1 720 000,00		X	337 705,00	337 705,00	X
1331	Համայնքի տեղական (ԿՄ) ռեզ		1 240 000,00	1 240 000,00	X	1 240 000,00	1 240 000,00		X	217 705,00	217 705,00	X
1334	Այլ գույքի վարչական թունից		480 000,00	480 000,00	X	480 000,00	480 000,00		X	120 000,00	120 000,00	X
1350	3.5 Վարչական գահճումներ	7422	2 696 900,00	2 696 900,00	X	2 696 900,00	2 696 900,00		X	221 400,00	221 400,00	X
1351	Տեղական վճարներ		1 896 900,00	1 896 900,00	X	1 896 900,00	1 896 900,00		X	221 400,00	221 400,00	X
1352	Համայնքի վարչական տարածքում		800 000,00	800 000,00	X	800 000,00	800 000,00		X	0,00	0,00	X
1390	3.9 Այլ եկամուտներ (տող 1391 +	7452	130 000,00	130 000,00	0,00	130 000,00	130 000,00		0,00	20 000,00	20 000,00	0,00
1393	Օրենքով ներառված այլ տեղական		130 000,00	130 000,00	0,00	130 000,00	130 000,00		0,00	20 000,00	20 000,00	0,00



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 20-Ն

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N47-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ի կետի պահանջներով՝ համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Երզնկա համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 30-ի «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը հաստատելու մասին» N47-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը:
 - 1) Որոշման հղման մեջ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 30-րդ հոդվածի» փոխարեն շարադրել «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 183-րդ հոդվածի» բառակապակցությունը:

Կողմ -4 Դեմ -0 Չեղնապահ -0

1. ԲԱՂԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ
2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈԱՄ
3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ
4. ՍԱՀԱԿՅԱՆ ԶԱՆԻԲԿ

(Handwritten signatures in blue ink)



ՀԱՄԱՅՆՔԻ ՉԵԿԱՎԱՐ ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Երզնկա, 2-րդ փ., 33, (0232) 3-67-91 , norerznka-village@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
14 ԱՊՐԻԼԻ 2016թվականի N 21

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՌԱՍՅԱ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
53-րդ հոդվածի՝ համայնքի ավագանին որոշում է.

Ընդունել ի գիտություն Նոր Երզնկա համայնքի ղեկավարի տարեկան հաշվետվությունը
2015թվականի համայնքի քառամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ
համաձայն հավելվածի:

Կողմ -4

Դեմ -0

Չեռնալահ -0

1. ԲԱՂԱՆՅԱՆ ԱՐՏՈՒՐ

2. ՄԱՐԴՈՅԱՆ ՎՈՍՄ

3. ՄԵՍՐՈՊՅԱՆ ԵՐԱԶԻԿ

4. ՍԱՀԱԿՅԱՆ ՋԱՆԻԲԵԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ԱԼԻՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
Նոր Երզնկա համայնքի ավագանու
2012 թվականի դեկտեմբերի 18-ի
Նո 36-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ
2013-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Համայնքի ավագանու



Ա. Հարությունյան

Նոր Երզնկա 2012թ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ է քառանյա ծրագիրը

1. Համայնքի իրավիճակի գնահատում:
2. Համայնքի ռազմավարությունը և հիմնական նպատակները:
3. Ըստ առանձին բնագավառների առաջնահերթ ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում:
4. Համայնքի բյուջեի ֆինանսական միջոցների գնահատում և կանխատեսում:
5. Համայնքի զարգացման քառանյա ծրագրի հիմնական ցուցանիշները:
6. *Հավելված 1.* Համայնքի ղեկավարի աշխատակազմի և ենթակա կազմակերպությունների կառուցվածքը:
7. *Հավելված 2.* Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը:

Ի՞նչ է ԶԱՌԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի զարգացման քառամյա ծրագիրը այն հիմնական փաստաթղթերից մեկն է, որը նշակվում է համայնքի ղեկավարի և նրա աշխատակազմի կողմից, քննարկվում և հաստատվում է համայնքի ավագանու կողմից և դրվում է գործողության մեջ: Այն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծումը և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացումը:

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1.1 Աշխարհագրական դիրքը, պատմական ակնարկ

Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղը գտնվում է ՀՀ մայրաքաղաք Երևանից 15 կմ հեռավորության վրա հյուսիս-արևելյան մասում, ծովի մակերևույթից 1100-1400 մ բարձրության վրա: Գյուղը հիմնադրվել է 1965թ. նախկին Աշտարակի, Եղվարդի և Կարբի գյուղի բազայի հիման վրա: Ակզբնական շրջանում անվանվում էր 41-րդ սովխոզ: 1972թ. Նաիրիի շրջանը վերակազմավորելու նպատակով մտել է նորաստեղծ շրջանի կազմի մեջ: Այժմ գյուղը գտնվում է Կոտայքի մարզի վարչական կազմի մեջ և գտնվում է մարզկենտրոնից 55 կմ հեռավորության վրա:

1.2 Ժողովրդագրություն

2012թ. հունվարի 1-ի դրությամբ գյուղում ապրում է 1800 բնակիչ, որոնցից տղամարդիկ կազմում են բնակչության 49%-ը:

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

1.	Երեխաներ (0-6տ)	- 152
2.	Դպրոցականներ (7-17տ)	- 271
3.	18-65 տարեկան	- 1327
4.	Թոշակառուներ	- 245
5.	Հաշմանդամներ	- 40
6.	Աշխատունակներ	- 957
7.	Գրանցված ընտրողների թիվը	- 1354
8.	Փախստականներ	- 15
9.	Գործազուրկներ	- 15
10.	ընտանիքների թիվը	- 325
11.	Գրանցվածներ «Փարոս» համակարգում	ընտանեկան նպաստների - 120

Գյուղն ունի 325 ծուխ, որոնցից 50-ը ընդգրկված են ընտանեկան նպաստի համակարգում:

Վերջին տարիներին նկատվում է նոր ծնված երեխաների աճ: Երիտասարդները գյուղից մեկնում են քաղաք կամ հեռանում Հայաստանից: Եթե համեմատենք նախորդ տարիներին, ապա, գյուղի բնակչությունը աճել է:

1.3 Տեղական ինքնակառավարման մարմինները

Գյուղը կառավարվում է համայնքի ղեկավարի կողմից, որն ընտրվում է չորս տարին մեկ անգամ: Համայնքի ղեկավարը ստեղծել է աշխատակազմ հետևյալ կառուցվածքով:

- Աշխատակազմի ղեկավար
- գլխավոր մասնագետ
- առաջատար մասնագետ
- 1-ին կարգի մասնագետ
- 2-րդ կարգի մասնագետ
- հավաքարար
- վարորդ
- պահակ

Համայնքի ենթակառույցներն են՝

Մուր-մանկապարտեզ ՀՈԱԿ / 2 խմբով/

- տնօրեն
- դաստիարակներ
- դաստիարակի օգնական
- հաշվապահ
- գանձապահ
- բուժքույր
- գործավար
- երաժշտության մասնագետ
- տնտեսվար
- օժանդակ բանվոր
- ցերեկ. պահակ
- լվացքարար
- խոհարար
- գիշերային պահակ

Մշակույթի տուն ՀՈԱԿ

- տնօրեն
- գրադարանավար
- հաշվապահ
- պահակ
- հավաքարար

Աշխատակազմի և ենթակառույցների ամբողջ ապարատը բաղկացած է 29 հոգուց: Համայնքի ավագանին բաղկացած է 7 հոգուց:

1.4 Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ֆիզիկական վիճակը

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի ցանկը սահմանված է ՀՀ կառավարության որոշմամբ և բերված է հավելված 2-ում: Տնտեսական անկման հետևանքով համայնքի գույքի ֆիզիկական վիճակը վատթարացել է, համայնքում խմելու ջրի ներտնտեսային համակարգը կառուցվել է 1965-70թթ, և մաշվածությունը այնքան մեծ է, որ կորուստները հասնում են 30-40%-ի: Համայնքում գոյություն ունեն երկու կաթսայատուն, որով ջեռուցվում էր ամբողջ համայնքը, սակայն տնտեսական անկման պատճառով այն լրիվ շարքից դուրս է եկել: Կեղտաջրերի հեռացման կենտրոնական խողովակաշարը, որը միանում էր Աշտարակի կենտրոնական կեղտաջրերի հեռացման համակարգին, շարքից դուրս է եկել և այդ հատվածում կեղտաջրերի հեռացումը կատարվում է բացօթյա: Համայնքում գոյություն ունեն մոտ 17կմ ասֆալտապատ փողոցներ և ճանապարհներ, որը կապիտալ վերանորոգման չենթարկելու պատճառով շարքից դուրս է եկել, չնայած ամեն տարի համայնքապետարանի միջոցներով կատարվում են փոսային նորոգումներ, այնուամենայնիվ, եթե այսպես շարունակվի լրիվ շարքից դուրս կգա: Ընդհանուր առմամբ կապիտալ վերանորոգման ենթակա 1, մոտ 12կմ ասֆալտապատ ճանապարհ և փողոց:

1.5 Բնության և շրջակա միջավայրի պահպանություն

Չնայած համայնքում գործում է աղբահանության գործընթացը Աշտարակի Վիկտորիա ՍՊԸ-ի միջոցով, սակայն արդեն ժամանակն է ունենալ սեփական աղբափոխադրիչ տրանսպորտ: Համայնքում ոռոգման ջուրը մատակարարվում է 15կմ կիսախողովակային, 10կմ փակ և մոտ 15կմ հողային առուների ի ցանցով, որը անհատույց վարձակալությամբ տրվել է ոռոգման ջուր սպասարկող կազմակերպություններին, որոնք շուրջ 10 տարի է ոչ մի անգամ կապիտալ նորոգման չեն ենթարկվել, այնպես որ, եթե այսպես շարունակվի ոռոգման ջրի համակարգը լրիվ շարքից դուրս կգա: Ոռոգման համակարգում կորուստները կազմում են 70%:

1.6 Բնակարանային տնտեսություն

Համայնքում կան 108 հատ քաղամարնակարան շենքեր, 50 առանձնատուն, 28,557 հազ. քմ տարածքով քաղամարնակարան շենքեր, սեփականաշնորհված են և համայնքում գոյություն ունի համայնատիրություն, սակայն բնակիչները ի վիճակի չեն ներդրումներ կատարել:

1.7 Հողատարածքների օգտագործում

Համայնքի հողային տարածքը կազմում է	1635.79հա, որից՝
○ վարելահողեր -	538.96 հա
○ արոտավայրեր -	572.06 հա
○ այգիներ -	120.42 հա
○ Այլ հողեր	196.3
○ Բնակավայրի հողեր	133.58
○ Իրային ֆոնդի հողեր	74.47

Հողի սեփականաշնորհմանը մասնակցել է 583 քնտանիք, մեկ հողարածնի չափը կազմել է 0.75հա, համայնքի վարչական տարածքում պետական պահուստային հողերը կազմում են 226.0հա:

1.8 Գյուղատնտեսություն

Համայնքում գյուղացիական տնտեսությունները զբաղված են դաշտավարությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ, ընդհանրապես գյուղատնտեսության բնագավառում զբաղված է համայնքի բնակչության մոտ 70%-ը: Համայնքն ունի 910 խոշոր և 850 գլուխ մանր եղջերավոր անասուններ, 50 գլուխ խոզեր և 3 թև թռչուններ: Համայնքի գյուղացիական տնտեսությունները զբաղված են պտղի, խաղողի, ցորենի, գարու քաղամայր խոտաբույսերի, ինչպես նաև բանջարաբոստանային կուլտուրաների արտադրությամբ, որը խիստ զգայուն է շրջակա միջավայրի նկատմամբ և մեծապես կախված է բնության քմահաճույքից: Ընդհանուր առմամբ համայնքում արտադրվում է խնձոր, տանձ, ծիրան, խաղող, միս, կաթ, բուրդ, ձու, մեղր և բանջարաբոստանային կուլտուրաներ: 100%-նոց ոռոգվում են վարելահողերի, խոտհարքների և այգիների տարածքները: Համայնքում արոտավայրերը մեծամասնությամբ գտվում են դարավանդների վրա: Դաշտամիջյան ճանապարհները, որոնք համայնքում կազմում են մոտավորապես 30-40կմ:

1.9 Կրթություն

Համայնքում կա մեկ նախադպրոցական հիմնարկ, որի հզորությունը կազմում է 90 երեխա, սակայն ներկա դրությամբ մսուր-մանկապարտեզ են հաճախում 60 երեխա, 2 խումբ, որոնց սպասարկում են 13 աշխատողներ, միջնակարգ դպրոցում սովորում են 270 երեխա, որտեղ աշխատում են 27 ուսուցիչներ և 6 սպասարկող անձնակազմ: Համայնքում չկա առանձին գրադարանի շենք: Այն գտնվում է մշակույթի տանը: Գրադարանն ունի մոտ 7041 կտոր գրականություն և տարեկան սպասարկում է մոտ 400 րնթերցողի: Համայնքի

նախադնկրոցական հիմնարկը, միջնակարգ դպրոցը, մշակույթի տունը, մսուր մանկապարտեզը, բուժ ամբուլատորիայի մի հատվածը կապիտալ վերանորոգվել է:

1.10 Տնտեսություն

Համայնքը մինչև 1997թ. հունվարի 12 ունեցել է 1 արդյունաբերական ձեռնարկություն, սակայն այժմ չունի: Համայնքի առևտրի և սպասարկման ոլորտը գտնվում է լավ վիճակում: Ազգաբնակչությանը սպասարկում է 6 խանութ: Առևտրի և սպասարկման ոլորտում գրավածների թիվը կազմում է մոտ 6 մարդ:

1.11 Առողջապահություն

Համայնքում գործում է մեկ պոլիկլինիկա բուժ. անձնակազմով, որը տեղավորված է հանայնքի ենթակայության տակ գտնվող առանձին շենքում, սակայն շենքը մասնակի վերանորոգման կարիք ունի:

1.12 Հանգստի գոտիներ, գրոսայգիներ, խաղահրապարակներ

Համայնքն ունի գրոսայգի 0.2 հա տարածքով, որտեղ կառուցված է զոհված ազատամարտիկների հուշարձան – կոթողը: Տարածքն ամբողջովին ծառապատված է, և ամեն տարի կատարվում են ծառատնկումներ, ընդհանուր առմամբ, այն գտնվում է բարվոք վիճակում:

1.13 Համայնքի ուժեղ կողմերը

- Համայնքն գտնվում է Աշտարակ քաղաքին կից:
- Տրանսպորտային ամենօրյա կապ է հաստատված Երևան և Աշտարակ քաղաքների հետ, իսկ մարզկենտրոնի հետ տրանսպորտային կապ գոյություն չունի:
- Ավատվել է գազաֆիկացման գործընթացը:
- Համայնքում գործում է միջքաղաքային հեռախոսակապ:
- Խմելու ջրի ներհամայնքային համակարգը գտնվում է վատ վիճակում, չնայած դրան համայնքն ապահովված է խմելու ջրի 24 ժամյա մատակարարմամբ:
- Ոռոգման ներհամայնքային համակարգը գտնվում է անմխիբար վիճակում, սակայն գյուղապետարանի կողմից աշխատանքներ են տարվում այն կատարելագործելու համար:

1.14 Համայնքի թույլ կողմերը

- Ներհամայնքային ճանապարհների վատրար վիճակը:
- Գործազրկության բարձր տոկոսը /30%/:
- Սոցիալապես անապահով բնակչությունը համայնքում կազմում է 20%:
- Խմելու և ոռոգման ջրի ներհամայնքային ցանցերը վերանորոգման խիստ կարիք ունեն:

1.15 Համայնքին սպառնացող վտանգներ

Խմելու ջրի ներհամայնքային համակարգը կառուցվել է 46 տարի առաջ և ոչ մի անգամ չի ենթարկվել կապիտալ նորոգման և եթե առաջիկա 1-2 տարում հիմնական նորոգման չենթարկվի, ապա մաշվածության պատճառով հնարավոր է կեղտաջրերի ներթափանցումը համակարգ, որը կդառնա ինֆեկցիոն հիվանդությունների առաջացման պատճառ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԵՊԱՏԱԿՆԵՐԸ

2.1 Ոազմավարությունը

Համայնքի ռազմավարության հիմնական նպատակներն են համայնքը դարձնել բարեկարգ, բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները: Բարեփոխումներ կատարելով՝ նախատեսվում է հասնել հետևյալ նպատակներին.

- գյուղապետարանի շենքի կապիտալ նորոգում
- հանդիսությունների տան նորոգում.
- ներհամայնքային փողոցների և ճանապարհների վերանորոգում.
- Սշակույթի տան կահավորում
- Հուշարձանների վերանորոգում
- գիշերային լուսավորության կառուցում
- Զբոսայգու կանաչապատում, խաղահրապարակի ձևավորում
- Ասուր-մանկապարտեզի շենքի ջեռուցում, տարածքի ցանկապատի կառուցում

3.ՇՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՐՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՂՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

Ծրագիր 1 Ներհամայնքային փողոցների և ճանապարհների վերանորոգում
Ծրագրի նկարագրությունն ու հիմնավորումը

Համայնքն ունի մոտ 17կմ երկարությամբ ներհամայնքային փողոցներ և ճանապարհներ, որոնք կապիտալ վերանորոգման չենթարկվելու պատճառով աստիճանաբար շարքից դուրս են գալիս: Ասֆալտապատված է միայն 2-րդ փողոցը : Ներկայումս առավել հրատապ է 1-ին, 3-րդ և 8-րդ փողոցների վերանորոգման աշխատանքները:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Ծրագրի հիմնական նպատակներն են՝

- վերացնել փողոցների ջրափոսերը.
- ապահովել տրանսպորտի բոլոր միջոցների համար բավարար երթևեկության պայմաններ տարվա բոլոր եղանակներին:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

Խնդիր 1

1/ Գտնել դոնոր կազմակերպություններ:

2/ Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր

Խնդիր 2

Աշխատանքներն իրականացնել 2013-2016թթ. ընթացքում:

Ծրագրից սպասվող արդյունքները

Ծրագիրն իրականացնելը հնարավորություն կտա համայնքի փողոցները բերել բարեկարգ տեսքի, երթևեկության համար ստեղծել բավարար պայմաններ:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Նախնական մոտավոր հաշվարկներով 1 կմ երկարությամբ փողոցի վերանորոգման համար անհրաժեշտ է մոտ 80000.0 հազար ՀՀ դրամ, որի 10%-ը նախատեսվում է իրականացնել համայնքի բյուջեի միջոցների հաշվին, 90%-ը՝ դոնոր կազմակերպության հաշվին:

Ծրագիր 2. Համայնքի փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում

Գյուղի ընդհանուր տարածքում հիմնականում լուծված է փողոցային լուսավորության հարցը: Անհրաժեշտ է շարունակել արտաքին լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները ընդգրկելով նոր քաղամասը և հուշակամարից մինչև կենտրոն տարածքը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում.

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ

Ուսումնասիրել և ճշտել այն փողոցների ցանկը որտեղ առաջնահերթ պետք է իրա կանացնել ծրագիրը

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը և շարունակելով լուսավորման համակարգերի կառուցման աշխատանքները քառամյա ծրագրի վերջին կրարելավվի համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի ֆինանսական միջոցների գնահատում

Լախնական մոտավոր հաշվարկներով այս աշխատանքների կատարման համար հաշվարկվել է 4000.0 հազ.դրամ

Ծրագիր 3. Համայնքապետարանի շենքի կապիտալ նորոգում

Ծրագիրը նախատեսում է գյուղապետարանի շենքի աշխատասենյակների հատակների նորոգման և ներքին հարդարման աշխատանքների իրականացումը:

Ծրագրի նպատակն ու խնդիրները

Համայնքապետարանում նորմալ և բարեկեցիկ աշխատանքային պայմանների սպասելով մ. փոշու վերացում. քանի որ համայնքապետարանը հագեցված է համակարգչային տեխնիկայով:

Ծրագրի իրագործման համար անհրաժեշտ է լուծել մի շարք կարևոր խնդիրներ
Ծրագիրն իրականացնել 2014-2016 թվականների ընթացքում

Ծրագրից սպասվող արդյունքները

Իրականացնելով այս ծրագիրը կրարելավվի համայնքի բնակչության սպասարկումը. կապահովվի համայնքապետարանի աշխատակիցների համար աշխատանքների կազմակերպում բարեկարգ միջավայրում. կապահովվի համակարգչային տեխնիկայի համար բնականոն աշխատանք:

2012-2016 թթ. ԱՌՏԻԱԼ-ՏԵՏԵԱԿԱԼ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՌԱՅԱ ՇՐՈՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱՏԵԿԱԿՈՆՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԴԱՍՏՈՒՑ ԱՄՓՈԹԱԳԻՐ

Գ	Ծրագրի միջոցառման, աշխատանքի անվանումը	Չափի միավոր	Ֆինանսավորման աղբյուրները	Ֆինանսավորման աղբյուրները	Կատարման ժամկետները				Պատասխանատու			
					համայնքի բյուջե	դրո՞ր կազմ	այլ (պետ. բյուջե, այլն)	2013թ. Ֆին.միջ.		2014թ. Ֆին.միջ.	2015թ. Ֆին.միջ.	2016թ. Ֆին.միջ.
1.	Գյուղակատարանի շենքի նորոգում	մ ²	506	30000.0	5000	25000		1000.0	4000.	18000.		համ. ղեկ.
2.	Դանդախությունների տուն	մ ²	350	3000.0	1000.0	-	2000	2000.0	-	-	1000	համ. ղեկ.
3.	Գիշերային լուսավորության կառուցում	գծմ	1000	4000.0	4000.0	-	-	-	-	-	4000.0	համ. ղեկ.
4.	Ներհամ փող. և ճան. նորոգում	քմ	10000	80000.0	5000.0	15000.	60000	16000	16000	16000	32000	համ. ղեկ.
5.	Աստի-ճանկավարտեչի ցեռուցման հանակարգի կառուցում	քմ	385	3000.0	3000.0	-	-	-	-	-	3000.0	համ. ղեկ.
6.	Զբոսադուր կանաչապատում խաղաղսիրապարակի ձևավորում	հա	0.2	2500.0	2500.0	-	-	-	-	-	2500.0	համ. ղեկ.

Եստր-մանկապարտեզի տարածքիցանկապարտում.կ սնունդապատում	հա	0.3	2000.0	2000.0	-	-	-	-	-	2000	համ. ղեկ.
Մշակույթի կանախբուս			5000.0	5000.0	-	-	2000.0	1000.0	2000.0	2000.0	համ. ղեկ.
Գեղեցկանոցի զանկապարտի կառուցում			4000	4000	-	-	-	-	4000	4000	համ. ղեկ.
Նոր թաղամասի զազաֆի-կացում			10000	10000			5000	5000			համ. ղեկ.
Հողաբաժանների վերանորոգում			2000	2000					2000	2000	համ. ղեկ.

4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՍԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՐԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքում կոնկրետ ծրագիր իրականացնելու համար կարևոր նշանակություն ունի համայնքի ֆինանսական միջոցների գնահատումը և կանխատեսումը: Կոտայքի մարզի Նոյ Երզնկա համայնքում այն ունի հետևյալ պատկերը:

(հազ. դրամ)

ՀՀ	Եկամուտների տեսակը	2012թ. փաստ.	2013թ. նախատեսված	2014թ. կանխատեսում	2015թ. կանխատեսում	2016թ. կանխատեսում
1.	ԵԿԱՍՈՒՄՆԵՐ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	27558.1	33460	37600.0	46400	54500
Ա	ԵԿԱՍՈՒՄՆԵՐ	8893	10154.7	10600	11400	12500
Ա.1	ԸՆԹԱՑՈՎ ԵԿԱՍՈՒՄՆԵՐ	8893	10154.7	10600	11400	12500
1.	ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՄՆԵՐ	6350	6000	6300	6800	7300
1.1	Հողի հարկ	2350.0	2300.0	2300	2300	2300
1.2	Գույքահարկ	4000.0	3700.0	4000	4500	5000
1.3	Եկամտահարկ					
1.4	Այլ հարկ, եկամուտներ	100.0	-			
2	ՏՈՒՐՔԵՐ	1290.0	1280	1300	1500	2000
2.1	Չեռական տուրքեր					
2.2	Տեղական տուրքեր	1290.0	1280	1300	1500	2000
3	ՈՉ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՍՈՒՄՆԵՐ	1153	2874.7	3000	3100	3200
3.1	Համայնքի վարչ. տար.-ում զանվոդ հողերի վարձակալ, և օգտագործ. դրմաց գանձվող վճարներ	1120.0	1334.7	1400	1500	1600
3.2	Գույքի վարձակալությունից եկամուտներ					
3.3	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ կողմից վարչ. պատասխ. միջոցների կիրառումից եկամուտներ	0	50	100	100	100
3.4	Տեղական վճարներ	33.0	1490	1500	1500	1500
3.5	Այլ ոչ ուարկ, եկամուտներ					
Ա.2	ԵԿԱՍՈՒՄՆԵՐ ԿԱՊԻՏԱԼ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՅ	10.0	1500	5000	10000	15000
Բ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ	18655.1	21805.3	22000	25000	27000
Բ.1	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ ԸՆԹԱՑՈՎ	18655.1	21805.3	22000	25000	27000
Բ.2	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՏՐԱՆՍՖԵՐՆԵՐ ԿԱՊԻՏԱԼ					

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՔԱՌԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ԳԳ	Ցուցանիշներ	Գալիի միավոր	2010թ փաստ.	2011թ փաստ.	2012թ փաստ.	2013թ կանխ.	2014թ կանխ.	2015թ կանխ.	2016 կանխ.
1	2	3	4	5	6	7	8		
1	Գումայքի տարածքը	հա	1635.79	1635.79	1635.79	1635.79	1635.79	1635.79	1635.79
2	Բնակչության թիվը	մարդ	1800	1800	1800	1820	1850	1880	
3	Ծնունդ	մարդ	14	10	20	16	18	20	
4	Մահացությունը	մարդ	12	8	16	20	18	19	
5	Այլ տեսությանը այդ թվում ազգայնականները ըստ տնտեսության ճյուղերի	մարդ	900	894	720	870	900	950	
6	Գործազրկության մակարդակը	%							
7	Սեռերի, սպասարկում օջեկանների թիվը	հատ	7	7	6	7	8	8	
8	Պահուստային հողեր	հա	226.0	226.0	226.0	226.0	226.0	226.0	
9	Պահուստային հողերի օգտագործմակարգակ	%	12	20	33	50	60	60	
10	Խնկուցի ներհամ. համակերպությունը	կմ	12	12	12	12	12	12	
11	Նեհամայրային ոռոգման համակարգի երկարությունը	կմ	40	40	40	40	40	40	
12	Ոռոգման համակարգի տակ զանվող հողեր	հա	638.0	638.0	638.0	638.0	638.0	638.0	
13	Ներհամա. փոթեցների և ճանապարհների երկարությունը	կմ	17	17	17	17	17	17	
14	Չբարեկարգված փողոց, ճանապ. երկարությունը	կմ	17	17	17	17	17	17	
15	Բնակ. ֆոնդ, այդ թվում մասնավոր	շենք/ ոսպ.քմ	32.124 130	33.366 148	33.366 148	33.728 152	34.5 160	35.120 168	
16	Բնակարիքավոր բնութանքները թիվը	ընտ.							
17	Սեռ. շնչին ընկնող ջրի սպասումը	լ / օր	120	110	122	200	200	200	
18	Ձրի կորուստները ներհամայրային համակարգում	%							
19	Սոցիոլոգների հանրակրթ. դպրոցում	մարդ	280	300	293	295	320	350	
20	Երեխաների մեմկադ. ում	մարդ	50	50	60	60	60	60	
21	Գյուղատնտեսականի և ներակառուցվածքների ուշխատողների թիվը	մարդ	25	25	29	30	30	30	


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

1. Գյուղատնտեսական տնտեսությունների թիվը	- 325 այդ թվում
ա. անհատական տնտեսություն	- 325
բ. կոլեկտիվ տնտեսություն	-
գ. պետական տնտեսություն	-
2. Գյուղ. արտադրանքի հիմնական տեսակների արտադրությունը.	
ա. ցորեն	-60 ջննտներ
բ. գարի	-20
գ. կարտոֆիլ	- 20
դ. կաղամբ	-10
ե. բանջարաբուստ. կուլտ.	- 50
զ. միզ	- 5000
է. կաթ	-8000
ը. միս	-200
թ. ձու	-170000 հատ
3. Ցանքատարածությունները	
ա. հացահատիկ	-30 հա
բ. կարտոֆիլ	-2
գ. բանջարաբուստ. կուլտ.	-7
դ. կաղամբ	-0.5
ե. մրգատու այգի	-163
զ. անվույտ	-5
4. Անասնազիլաբանակը, հատ	
ա. խոշոր եղջեր. անասուններ	-910 գլուխ
այդ թվում կովեր	-630
բ. մանր եղջեր. անասուններ	-850
այդ թվում մայրեր	-659
գ. խոզեր	-34
այդ թվում մայրեր	-18
դ. թռչուններ	-3100թև
այդ թվում հավեր	-2580

5. Գյուղատնտեսական մեքենաների և գործիքների քանակը, հատ այդ թվում

ա. համայնքային սեփ.-ան թրթուրավոր տրակտոր	-	բ. մասնավոր սեփականության թրթուրավոր տրակտոր	-2
անհիվավոր տրակտոր	-	անհիվավոր տրակտոր	
-13			
հացահատիկային կոմբայն	-	հացահատիկային կոմբայն	-1
խտտիճիչ կոմբայն	-	խտտիճիչ կոմբայն	- 0
բեռն. ավտոմ. տարբեր մակնիշի	-	բեռն. ավտո. տարբեր մակնիշի	-7
տրակտորային կցասայլեր	-	տրակտորային կցասայլեր	-10
գութաններ	-	գութաններ	-4
կուլտիվատորներ	-	կուլտիվատորներ	-5
չարբացաններ	-	չարբացաններ	-1
խտտ հակավորող մեքենաներ	-	խտտ հակավորող մեքենաներ	-2
պարարտանյութ ցրիչ	-	պարարտանյութ ցրիչ	
- -1			
կերամանրիչ	-	կերամանրիչ	-
այլ	-	այլ	-

ՆՈՐ ԵՐՁՆԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ԵՆԹԱԿԱ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



ՆՈՐ ԵՐԶՆԿԱ ԳԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՂԻՍԱՅՈՂ ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿԸ

1. Գյուղխորհրդի նախկին շենք
2. Ստուր-մանկապարտեզի շենք
3. Կուլտուրայի տան շենք
4. Առևտրի կենտրոնի շենք
5. Կաթսայատուն թիվ 2
6. Գյուղապետարանի շենք
7. Ակումբ վերևի ավանում
8. Ենթակայան թիվ 3
9. Ջեռուցման ցանց
10. Ասֆալտապատ ճանապարհներ
11. Բնական գազի սարք
12. Հողալիցի
13. Ոռոգման ցանց
14. Կոյուղու ցանց
15. Փակ ենթակայան
16. Գազի ցանց
17. Ջրամբար
18. Հանր. նշան. ճանապարհներ
19. Գերեզմանոցի ցանկապատ
20. Լուսավորության ցանց